հովանաւոր լինելուց զատ՝ չէր զլանում նաև մահմեդական եր-
կիրներում հայերին թեարկու հանդիսանալ իւր ներկայացուցիչ-
ների միջնորդութեամբ։ Այսպէս՝ երբ 1780 թ. Յովսէփ արք-
եպիսկոպոսը Ղուկաս հայրապետի պատուէրով խնդիր տուաւ
Արտաքին Գործոց Ատենին, որպէս զի յանձնարարուի Օսմա-
նեան պետութեան մօտ կարգուած դեսպանին՝ կարևոր դէպ-
քերում «օգնել ու պաշտպանել հայոց Հայրապետի նուիրակ-
ներին Թիւրքիայի մայրաքաղաքում»,—այդ առթիւ 23 յունուա-
րի 1781 ամի մի Բարձրագոյն դիր առաքուեցաւ յանուն Կ.
Պոլսի ռուսաց դեսպան ստատսկի սուվէտնիկ Ստախէյեվի, ուր
ի միջի այլոց ասուած էր. «Ի նկատի առնելով այդ Հայոց
Հայրապետի մշտատև անձնուիրութիւնը Մեր Գահին և Հայերի
քրիստոնեայ լինելն, և այն հանգամանքը, որ նրանցից շատերը
Մեր պետութեան մէջ են բնակւում և ընդ միշտ Մեզ հպա-
տակ են, Մենք ամենայն ողորմածութեամբ յօժարամիտ ենք
ամեն պատեհ դէպքերում ցոյց տալ Մեր արքայական բարե-
մտութեան և ձեռնտուութեան հաւաստիքը թէ նոյն Հայրա-
պետին և թէ ամբողջ Հայ ազգին։ Ուստի այսու կամեցանք իմաց-
նել ձեզ, որ Հայոց Հայրապետը ոչ միայն ընդունած է Մեր
Կայսերական հրովարտակն և ըստ այնմ հրամաններ առաքուած
են մի քանի սահմանամերձ տեղեր, և թէ այժմ նոյն հրաման-
ներն առաքուած են նաև Ազովի ու Նովորոսիյսկի նոր նա-
հանգների վրայ, այլ՝ թէ դուք ևս պարտաւոր էք համակեր-
պուել այն հրամաններին ամեն յառաջ եկած դիպուածնե-
րում։ Հաճելի է Մեզ նմանապէս, որ այն ամեն տեղերում և
դէպքերում, ուր Մեր ծառայութեան և Մեր բուն հպատակ-
ների անմիջական առևտրին վնաս չլինի, և Մեր ուղղափառ
եկեղեցու հետ միակրօն և այժմ տաճկական լծի տակ հեծող
յունաց եկեղեցուն ոսոխութիւն չյայտնուի և վերջապէս ուր և
երբ Ձեզ յանձնուած կոչման պատուին նուազումն բերող բան
չը յայտնուի,—այդ ամեն պարագաներում Դուք Ձեր բարի
ջանքը Հայոց Հայրապետի Ձեր ծառայութեան տեղն առաքած
նուիրակների օգտին դործ դնէք, ըստ որում նրանք քրիստո-
նէական օրէնք դաւանողներ են, և մարդասիրութեան և սոյն
հրահանգներին համեմատ ամեն պատշաճաւոր օժանդակու-
թիւն ընծայէք նրանց»։

26 փետրուարի 1798 ամի Բարձրագոյն հրովարտակ
շնորհուեցաւ յանուն Ղուկաս կաթողիկոսի և համօրէն Հայ ազ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան